

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հունիսի 15-ի N 666 -Ն որոշման

ԶԱՓՈՐՈՇԻՉ ՀԱՎԱՔՈՐ

ՀԱՎԱԳՈՒՅՑ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

1. Թափոնների գործածության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը թափոնների գոյացման ծավալների և դրանց հնարավոր վտանգի նվազեցումն է՝
 - 1) նորագոյն գիտատեխնիկական նվաճումների օգտագործումն անթափոն և սակավաթափոն տեխնոլոգիաների ներդրման միջոցով.
 - 2) նյութահումքային ռեսուրսների համալիր օգտագործումը՝ թափոնների կրճատման նպատակով.
 - 3) հետագա օգտագործման համար ոչ պիտանի թափոնների անվտանգ հետացման ապահովումը համապատասխան տեխնոլոգիաներով՝ էկոլոգիապես անվտանգ մեթոդների ու միջոցների կիրառմամբ.
 - 4) տնտեսական խթանման մեխանիզմների ստեղծման միջոցով:
2. Լավագոյն տեխնոլոգիաների ներդրումը ենթադրում է հումքի և էներգետիկ ռեսուրսների լիարժեք օգտագործում:
3. Լավագոյն հնարավոր տեխնոլոգիաների ներդրմանը ներկայացվող չափորոշիչներն են՝
 - 1) թափոնների առաջացման կանխարգելումը.
 - 2) վտանգավոր նյութերի և պրոցեսների կրճատումը կամ բացառումը.
 - 3) թափոնների վերամշակման ընթացքում առաջացող թափոնների վերամշակումը և օգտագործվող նյութերի վերականգնումը, որտեղ որ այն հնարավոր է.
 - 4) արդյունաբերական ծավալներով հաջողությամբ փորձարկված գործունեության պրոցեսների և մեթոդների ներդրումը.

5) պրոցեսում օգտագործվող հումքի (ներառյալ ջրի) բնույթը, սպառումը և էներգետիկ արդյունավետությունը.

6) Էկոլոգիական ցուցանիշների բարելավումը.

7) արտադրության արդյունավետության բարձրացումը.

8) թափոնների կառավարմանն ուղղված ծախսերի նվազեցումը.

9) ռեսուրսների՝ հումքի, ջրի և էներգետիկայի օգտագործման և արտադրանքի ինքնարժեքի նվազեցումը.

10) շրջակա միջավայրի վրա վնասակար (բացասական) ազդեցության նվազեցումը,

11) վթարների կանխարգելումը և շրջակա միջավայրի համար դրանց հետևանքների նվազեցումը.

12) աշխատանքային պայմանների բարելավումը.

13) այլ արտադրություններից և մարդու կենսագործունեության արդյունքում գոյացած թափոնների հիմքի վրա արտադրությունների կազմակերպումը:

4. Ըստերքօգտագործման թափոնների կառավարում առկա լավագույն տեխնոլոգիաների համաձայն ներառում է հետևյալ միջոցառումների գնահատում՝

1) ընդերքօգտագործման թափոնների ծավալների նվազեցում.

2) ընդերքօգտագործման թափոնների այլընտրանքային օգտագործման ընդլայնում՝

ա. որպես լցանյութի օգտագործում,

բ. օգտագործում այլ հանքերի վերականգնման ընթացքում,

շ. օգտագործում լցման ընթացքում,

դ. ընդերքօգտագործման թափոնների պահանջվող տեխնիկական պարամետրերի ապահովում շրջակա միջավայրի անվտանգության տեսանկյունից ցանկացած վտանգ նվազագույնի հասցնելու նպատակով (օրինակ՝ պիրիտի հեռացում և բուֆերային նյութի ավելացում),

3) ուսագենատների ծախսի նվազեցում.

4) շահագործման փուլում պոչամբարների ջրային էրողիայի կանխարգելում հետևյալ

միջոցներով՝

ա. պոչամբարի թեք մակերեսների ծածկում պաշտպանիչ շերտով, ինչպիսիք են՝ կոպիճը, հողը և խոտածածկույթը, գետիյուսվածքը և խոտածածկույթը կամ այլ սինթետիկ ծածկույթը,

բ. պոչամբարի մակերեսային շերտի պատում քիմիական նյութերով, որոնք կարող են վանել ջուրը կամ առաջացնել մասնիկների կապակցում, ինչպիսիք են օրինակ՝ սիլիցիումային խառնուրդը, ցեմենտը, բիտումը կամ բենտոնիտը,

գ. այնպիսի պոչամբների քիմիական հատկությունների օգտագործում, որոնք պարունակում են սուֆիլիներ՝ մասնիկների կապակցմանը նպաստելու համար.

5) փոշու առաջացման կանխարգելում, օրինակ՝

ա. ամբարտակի կատարի և լանջերի ջրային էրողիայի դեմ մշակում,

բ. մակերեսին «հողմաջարդի» ավելացում կամ կապակցող նյութի կիրառում,

գ. բուսականության օգտագործում.

6) ստորգետնյա ջրերի մոնիթորինգ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների շրջանում.

7) պոչամբարում ջրի մեջ արտազատման կանխարգելում կամ նվազեցում, ինչը ներառում է՝

ա. տեխնոլոգիական ջրի կրկնակի օգտագործում,

բ. տեխնոլոգիական ջրի խառնում այլ՝ լուծված մետաղներ պարունակող հոսքերի հետ,

գ. պարզաբանների ստեղծում հողմահարված մանր մասնիկներն որսալու համար,

դ. կախված պինդ մասնիկների և լուծված մետաղների հեռացում մինչ «ընդունղ» ջրահոսքերի մեջ հոսքերի արտանետումը,

Ե. հիմնային հոսքերի չեզոքացում ծծմբական թթվի կամ ածխածնի երկօքսիդի միջոցով, հանքային հոսքերից արսենի հեռացում եռավալենտ երկաթի աղերի ավելացման միջոցով.

8) թթվային հոսքերի մշակում հետևյալ մեթոդներով՝

ա. ակտիվ մշակում՝ կրաքարի, հիդրատային կրի կամ չհանգած կրի ավելացում, կառուտիկ սողայի ավելացում մանգանի բարձր պարունակությամբ թթվային խճային դրենաժի համար,

բ. պասիվ մշակում՝ արհեստական ճահճային համակարգեր, բաց կրաքարային ջրանցքներ կամ անթթվածին կրաքարային հոսքեր, ջրահեռացման հորեր.

9) պոչանքների չորացում (չոր պոչանքներ, խտացված պոչանքներ կամ հեղուկացված պոչանքների կառավարում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ